Դիլիջանի համայնքի ղեկավար

պարոն՝ Դ. Սարգսյանին

# Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր ԹԻՎ 03

29.09.2022Թ.

Հայտնում եմ Ձեզ, որ Դիլիջան համայնքի 2022թ. տեղական բյուջեի ֆոնդային մասում **ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի «Հովի. Շարամբեյանի անվան մանկական գեղարվեստի դպրոց» շենքի վերակառուցում»** սուբենցիոն ծրագրի համար նախատեսվել է 241500000 (երկու հարյուր քառասունմեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, սակայն համաձայն ՀՀ Գնումների մասին օրենքի ընթացակարգի ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է մոտ 235000000 ՀՀ դրամ, ներառյալ տեխնիկական հսկության և հեղինակային հսկողության արժեքները: Ծրագրի ընդհանուր բյուջեի 60% -ը կազմում է համայնքի մասնաբաժինը, որը կազմում է մոտ 141000000 ՀՀ դրամ, հետևաբար նախատեսված գումարը ավելանում է մոտ 100 000 000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամով: Նշեմ նաև, որ արդեն իսկ ներկայացվել են 2023 թ" սուբվենցիոն ծրագրերի նախնական հայտերը, որոնք կառավարության կողմից արժանացել են հավանության: Ելնելով վերոգրյալից անհրաժեշտ է անհապաղ պատվիրել բոլոր նախատեսված ծրագրեի նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթները, սակայն տվյալ հոդվածներով բյուջեում նախատեսված գումարներ չկան: Առաջարկում եմ Դիլիջան համայնքի 2022թ. տեղական բյուջեի ֆոնդային մասում կատարել համապատասխան փոփոխություններ, այն է, «09-05-01» Դիլիջան համայնք (Արտադպրոցական դաստիարակություն) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվից հոդված 5113 /շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում/ պակասեցնել 100 000 000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ և բաշխել հետևյալ դասակարգումներով՝

1. «06-03-01» Դիլիջան համայնք (Զրամատակարարում) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ ավելացնել 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ,

2. «04-05-01» Դիլիջան համայնք (Ճանապարհային տրանսպորտ) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ ավելացնել 15 000 000 (տասնհինգ միլիոն) ՀՀ դրամ, հոդված 5113 /շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում/ ՝ 67 000 000 (վաթսունյոթ միլիոն) ՀՀ դրամ,

3. «06-01-01» Դիլիջան համայնք (Բնակարանային շինարարություն) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ ավելացնել 2 500 000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ,

4. «01-01-01» Դիլիջան համայնք (Դիլիջանի քաղաքապետարան) բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվին հոդված 5134 /նախագծահետազոտական ծախսեր/ ավելացնել 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, հոդված 5113 /շենքեր և շինությունների կապիտալ վերանորոգում/ ՝ 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամ:

Զեկուցագիր կազմող՝

Դիլիջանի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական,

եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժ/պ՝ Վարդան Գրիգորյան